acba

Հ Ր Ա Մ Ա Ն

17 մարտի 2022թ. Թիվ 128-Լ
ք. Երևան

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կանոնադրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ս.թ. մարտի 18-ից Բանկի Հաշվարկադրամարկղային գործառնությունների սակագնի 28.1 և 28.2 կետերով սահմանված՝ անհատ ձեռնարկատեր հաճախորդի ընթացիկ հաշվին կատարված մուտքից իր՝ որպես ֆիզիկական անձի անունով բացված անվճար կանխիկացման հնարավորություն տվող քարտի քարտային հաշվին գումարի փոխանցման, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր հաճախորդի ընթացիկ հաշվին կատարված մուտքից իր՝ որպես ֆիզիկական անձի անունով բացված ընթացիկ հաշվին գումարի փոխանցման և այնուհետև իր կամ այլ ֆիզիկական անձի անունով անվճար կանխիկացման հնարավորություն տվող քարտի քարտային հաշվին գումարի փոխանցման սակագինը այսուհետ փոփոխել հետևյալ կերպ՝

- ՀՀ դրամով՝ 0.3 %, նվազագույնը 200 ՀՀ դրամ,
- ԱՄՆ դոլարով՝ 3%, նվազագույնը 1000 ՀՀ դրամ,
- Եվրոյով՝ 2 %, նվազագույնը 1000 ՀՀ դրամ,
- ՌԴ ռուբլով՝ 1 %, նվազագույնը 1000 ՀՀ դրամ:

2. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել 04.03.2022թ. թիվ 105-Լ հրամանը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Styopa Zakinyan Digitally signed by Styopa Zakinyan Date: 2022.03.17 17:33:58 +04'00' **Ստյոպա Զաքինյան**